

## ՆԱՅԵԼՈՎ ԴԱՐՁԵԱԼ ՇԱՀԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻՆ



Աշխարհական էր բայց այս աշխարհէն  
չէր Շահան Պերպերեան: Որքան անգոր էր  
մարմնով՝ նոյնքան գորաւոր էր հոգեով:  
Երբ զինք տեսնէի՝ Պողոս Առաքեալի խօսքը  
կը յիշէի (Բ. Կորն. ԺԲ. 10): Հոգեկան էր,  
թէն հոգեւոր չէր: Կը հաւատար, բայց հա-  
ւատացեալ չէր՝ այս բառին ընդհանրական  
առումով: Փիլիսոփայ էր՝ ո՛չ միայն ուս-  
մամբ և գիտութեամբ՝ այլ նաև բնաւորու-  
թեամբ: Քիչ խօսքով և շատ խորհուրդով  
մտաւորական մը: Իմաստ կը փնտռէր ամէն  
բանի մէջ: Եւ կը գտնէր: Կը գտնէր ու կը  
սիրէր՝ զայն խոր ու անհուն սիրով մը:  
Այսինքն՝ իմաստասէր էր: Դժուար կ'ար-  
տայայտուէր, ո՛չ թէ որովհետև բառերը  
կը պակսէին իրեն, այլ որովհետև իր մտա-  
ծումները ծանրաբեռն էին զգացումով, և  
բառերը և խօսքերը կը բեկանէին իր խոր-  
հուրդին ծանրութեան տակ: Բայց ինքը իր  
քայլերով չէր ծանրացներ երկիրը, ինչպէս  
շատեր կ'ընեն: Կը խորհիմ թէ այս աշխար-  
հէն անցաւ՝ հազիւ զպցնելով իր ոտքերը  
երկրին: Երեցաւ հորիզոնէն, շարժեց մեթ-  
նոլորտը որուն մէջէն անցաւ, և աներևոյթ  
եղաւ հանդիպակաց հորիզոնին մէջ: Անոնք  
որ տեսան անոր անցքը՝ զգացին անոր  
ստեղծած շարժման հպումը իրենց հոգիին:  
Եւ ատով քիչ մը աւելի կեանք ունեցան.  
մանաւանդ անոնք՝ որ իր աշակերտները  
և մտքի և հոգիի մտերիմները եղան:

Ի՞նչ կրնայ մարդ մը ակնկալել ասկէ  
աւելի՝ ապրած ըլլալու համար:

Ձրանսագլուխ հայ մտաւորականութեան  
ազնուական տիպարներէն էր Շահան Պեր-  
պերեան: Կակուղ, ոգեկան հայրենասիրու-  
թիւն մը ունէր: Բոլորովին տարբեր այն  
կարծր ու չօշափելի հայրենասիրութենէն՝

զոր հայրենի լիւններու վրայ բուսած հայը  
ունի: Բնիկ ճարտարապետութեան գծերուն  
համադրութեան մէջ, հայ ժողովրդական  
երաժշտութեան ձայներուն ներգաշնակու-  
թեան մէջ, և նման բաներու մէջ կը տա-  
ղաւարէր իր հայկականութիւնը:

Առաջին աշխարհամարտին նախորդող  
և յաջորդող տարիներու տենդահար մթնո-  
լորտին մէջ շարժող արեւմտահայ մտաւո-  
րականութեան շարքերէն էր Շահան Պեր-  
պերեան: Իր անձին և իր խօսքին մէջէն  
կրնայիր ծանօթանալ այդ մտաւորականու-  
թեան անուանի շատ մը զէմքերուն, նշա-  
նաւորներուն և կէսնշանաւորներուն:

Այժմ այդ սերունդը «անցած» սե-  
րունդն է: Անցաւ նաև անոնց հետ, անոնց  
կրտսերներէն, Շահան Պերպերեան: Բայց  
ընդունայն չանցաւ: Իր քարը դրաւ հայ  
ոգեկանութեան շէնքին մէջ, կը շարունակէ  
տեւել («տեւելու» խնդիրը շատ կը դժաւցնէր  
իւր միտքը) իր աշակերտներուն և իր մտե-  
րիմներու հոգիին մէջէն:

Տարիներու բնակակցութեամբ և պաշ-  
տօնակցութեամբ երուսաղէմի ժառանգա-  
ւորաց Վարժարանի մէջ իր ուսուցչութեան  
չրջանին, հազորդ եղած եւ իր հոգիին և  
բարեկամացած իրեն: Անոր աներևութա-  
ցումը մեր աշխարհէն՝ աշնան տներնի մը  
անկումը կը յիշեցնէ ինձի՝ հայութեան ծա-  
ռին վրայէն: Տերեւ՝ որ կանաչցած ըլլա-  
լով ծառին կեանքովը՝ իր կարգին իր տուրքը  
տուաւ անոր կենսունակութեան:

Թո՛ղ կանաչ մնայ իր հոգին հայութեան  
կանաչութեան մէջ:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍ.